

Ընդհանուր ունակությունների թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու՝ բանավոր և մաթեմատիկական մասերից:

Յուրաքանչյուր մասը պարունակում է 40 առաջադրանք: Ամեն մի առաջադրանքին կցված է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Թեստի յուրաքանչյուր մասի վրա աշխատելու համար տրվում է 1 ժամ և 35 րոպե:

Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք պատասխանը:

Թեստի առավելագույն միավորն է 80:

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք գործածել ստեղնաշարի կոճակները:



Բանավոր մաս

Տրամաբանություն

Այս տեսքի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կատարվելիք եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրե՛ք հատկապես հարցին, որն ուղեկցում է յուրաքանչյուր առաջադրանքին, և տրված տարբերակներից ընտրե՛ք համապատասխան պատասխանը:

Որոշ հարցերին պատասխանելը կհեշտացնի տվյալների պատկերումը գծագրի կամ դիագրամի ձևով:

1. Երեք աղջիկ դատողություն են անում, թե քանի տետր կա գրասեղանի փակ դարակում.

Էլենե.– Բոլորիս մեկական տետր այնուամենայնիվ կհասնի:

Աննա – Դարակում տետրերի քանակը երեքից պակաս է:

Լիկա– Դարակը դատարկ չէ:

Քանի՞ տետր կա դարակում, եթե հայտնի է, որ աղջիկներից միայն մեկն է ասում ճշմարտությունը:

ա) Երեք,

բ) միայն երկու,

գ) միայն մեկ,

դ) անհնար է որոշել,

ե) ոչ մի :

2. Տրված են դրույթներ.

- Եթե ուրիշներին օգնես, անձամբ բավարարված կլինես:
- Եթե ուրիշներին հրապարակայնորեն օգնես, մարդկանց կողմից ճանաչում ձեռք կբերես:

Թվարկածներից ո՞րն է անպայման սխալ, եթե տրված դրույթները ճշմարիտ են:

- ա) Երբեմն ուրիշներին հրապարակայնորեն օգնելը մարդկանց կողմից ճանաչում և անձնական բավարարվածություն է բերում:
- բ) Ուրիշներին հրապարակայնորեն օգնելը միշտ անձնական բավարարվածություն և մարդկանց կողմից ճանաչում է բերում:
- գ) Երբեմն ուրիշներին օգնելը, որը ոչ ոք չի տեսնում, անձնական բավարարվածություն չի բերում:
- դ) Եթե անձամբ բավարարված ես, դա նշանակում է, որ օգնել ես ուրիշին, և դա ուրիշը չի տեսնում:
- ե) Եթե մարդկանց կողմից գտել ես ճանաչում, դա նշանակում է այն, որ ուրիշներին հրապարակայնորեն օգնել ես:

3. Գիորգին ծովային նավահանգստում սառույցով լիմոնադ է վաճառում: Սառույցով լիմոնադը շոգ օրերին գնում են ինչպես հետիոտները, այնպես էլ վարորդները: Սակայն Գիորգին զով օրերին ավելի շատ լիմոնադ է վաճառում, քան շոգ օրերին:

Թվարկածներից ո՞րն է քացատրում վերևում տրված անհամապատասխանությունը:

ա) Զով օրերին նավահանգստում ավելի շատ վարորդներ են տեղաշարժվում, քան հետիոտն:

բ) Շոգ օրերին սառույցով լիմոնադ ավելի շատ հետիոտներն են գնում, քան վարորդները:

գ) Շոգ օրերին հետիոտները նախընտրում են մնալ նավահանգստի շենքում և ոտքով հեռու չեն գնում:

դ) Շոգ օրերին հաճախորդները Գիորգիին հաճախ խնդրում են լիմոնադին սառույց ավելացնել:

ե) Զով օրերին Գիորգին երկարաձգում է իր աշխատանքային ժամերը և ավելի երկար ժամանակ է մնում նավահանգստում:

4. Աննան իր հին օդորակիչը փոխարինեց ավելի նոր էներգաարդյունավետ օդորակիչով, որից հետո **Էլեկտրաէներգիայի վարձը ընդհակառակն ավելացավ:**

Թվարկաձներից ^ո ըն **չի կարող բացատրել** նշված արդյունքը:

ա) Նոր օդորակիչ տեղադրելուց հետո Աննայի մոտ բնակության տեղափոխվեց ընկերը, ով ավելի շատ ժամանակ է անցկացնում տանը, քան Աննա:

բ) Մինչև նոր օդորակիչի տեղադրումը օդի ջերմաստիճանն ավելի ցածր էր, քան հաջորդ ամիսների ընթացքում:

գ) Նոր օդորակիչ տեղադրելուց հետո կիլովատ էլեկտրաէներգիայի արժողությունը ավելացավ:

դ) Նոր օդորակիչը Աննայի տանը ծախսած էլեկտրաէներգիայի ընդհանուր քանակի ավելի փոքր բաժինն է ծախսում, քան հին օդորակիչը:

ե) Աննան նոր օդորակիչ տեղադրելուց հետո նաև սոլյարիի սարք գնեց, որպեսզի տանը արևայրուք ընդունի:

5. Տրված է.

- Գովազդային ընկերության բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն:

Ստորև թվարկածներից ո՞ր դրույթը պետք է վերցնենք որպես երկրորդ նախադրյալ, որպեսզի եզրակացնենք. գովազդային ընկերության բոլոր աշխատակիցներն անցել են թվային մարկետինգի դասընթաց:

- ա) Թվային մարկետինգի դասընթացն անցնում են միայն բարձրագույն կրթություն ունեցող անձինք:
- բ) Բարձրագույն կրթություն ունեցող բոլոր անձինք անցել են թվային մարկետինգի դասընթաց:
- գ) Բարձրագույն կրթություն ունեն միայն գովազդային ընկերության աշխատակիցները:
- դ) Թվային մարկետինգի դասընթաց անցնում են միայն գովազդային ընկերության աշխատակիցները:
- ե) Բարձրագույն կրթություն ունեցող որոշ անձ անցել է թվային մարկետինգի դասընթաց:

Նախադասությունների լրացում

Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծիկներով: Մի գծիկը երբեմն մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի բառ է նշանակում:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակ պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից շեղ (/) գծիկներով են սահմանազատված: Ընտրե՛ք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հաջորդաբար տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում, կստացվի իմաստով արդարացված նախադասություն:

6. Ավստրալիայի ավագոտ առափնյակում մարդու առաջին ոտնահետքերը ալիքները _____ երբ զավթիչները ներխուժեցին մայրցամաքի խորքերը, ետևից այնպիսի հետք _____:

ա) չկարողացան լվանալ, թեև / թողեցին, որ ժամանակն էլ չէր կարող ջնջել

բ) չկարողացան լվանալ, որովհետև /չթողեցին, որ ժամանակն էլ չկարողացավ ջնջել

գ) իսկույն լվացին, որովհետև /չթողեցին, որ ժամանակը ջնջեր

դ) իսկույն լվացին, թեև / թողեցին, որ ժամանակն էլ չէր կարող ջնջել

7. Կարծես _____ այն փաստը, որ մեծամասնությունը սուտը կտրականապես _____ գնահատում, բայց միևնույն ժամանակ գործնականում _____ : Դրա հետ միասին, մեծամասնությունը կցանկանար, որ լավ կարողանար ուրիշի ստերը _____, իսկ անձամբ կարողանար _____:

- ա) պարադոքսալ չէ/ բացասական չի / նրանցից յուրաքանչյուրը փորձում է չստել / քողարկել / երբեք չստել
- բ) պարադոքսալ է / բացասական է / նրանցից յուրաքանչյուրը փորձում է չստել / քողարկել / համոզիչ կերպով ստել
- գ) պարադոքսալ չէ / բացասական չի / նրանցից յուրաքանչյուրը մեկ անգամ չէ, որ ստել է / բացահայտել / երբեք չստել
- դ) պարադոքսալ է/ բացասական է / նրանցից յուրաքանչյուրը մեկ անգամ չէ, որ ստել է / բացահայտել / համոզիչ կերպով ստել

8. Բարձր բարոյական կատեգորիաները հասկանալու ունակության առկայությունը _____, որ մարդը _____ վարվում, քանի որ բազմաթիվ այնպիսի մարդիկ, ովքեր գիտեն, որ սուտ ասելը գողություն է և այլ անբարոյականություն, բայց դա _____:

ա) այն բանի երաշխիքը չէ /միշտ բարոյականությանը համապատասխան է / ստիպում է նրան անարժան արարք չկատարել

բ) այն բանի երաշխիքը չէ / անբարոյականորեն չի / չի խանգարում անարժան արարք կատարելու մեջ

գ) այն բանի երաշխիքն է / անբարոյականորեն չի / չի խանգարում անարժան արարք կատարելու մեջ

դ) այն բանի երաշխիքն է / միշտ բարոյականությանը համապատասխան է / ստիպում է նրան անարժան արարք չկատարել

9. Հովիվության ֆիլմերի շնորհիվ եվրոպացի նվաճողների դեմ անվախ մարտնչող, ավանդույթները պաշտպանող հնդկացիներին մենք պատկերացնում ենք՝ որպես խիզախ հեծյալներ, _____ մի ինչ-որ հին մշակույթ պաշտպանող աբորիգեն՝ նախաբնիկ ամերիկացիները _____ 1492 թվականին, երբ Կոլումբոսը ոտք դրեց ամերիկյան մայրցամաք, այնտեղ _____:

ա) թեև / հիանալի հեծյալներ էին, քանի որ / այն ժամանակ ձիեր գոյություն չունեին

բ) որովհետև / հիանալի հեծյալներ էին, բայց / բազմաթիվ վայրի ձիեր գոյություն ունեին

գ) թեև / բոլորովին էլ հեծյալներ չեն եղել, քանի որ / այն ժամանակ ձիեր գոյություն չունեին

դ) որովհետև/բոլորովին էլ լավ հեծյալներ չեն եղել, թեև / բազմաթիվ վայրի ձիեր գոյություն ունեին

Ընթերցած տեքստի վերախմաստավորում

Ուշադրությամբ ընթերցե՛ք և վերախմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին պատասխանելու համար հնարավոր է անհրաժեշտ լինի տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից անցնել հարցին: Դա կհեշտացնե՞ք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմելով»:

- I Տիեզերքի յուրացումը, համաշխարհային օվկիանոսների ուսումնասիրությունը, հաշվիչ մեքենաների ստեղծումը և մարդկային գործունեության տարբեր ոլորտներում բազմաթիվ այլ նվաճումներ հաճախ կապված են կենդանի օրգանիզմների (մեղուներ, չղջիկներ, դելֆիններ և այլն) ֆիզիոլոգիական և անատոմիական առանձնահատկությունների ուսումնասիրության հետ: Մարդու կողմից մինչև օրս ստեղծված ամեն ինչ գունագրկվում է այն արդյունավետ և կոմպակտ «սարքերի» ֆոնի վրա, որոնցով հագեցած են թռչնի թևերը, ձկան լողակները և այլն: Գիտությունը, որն ինժեներական խնդիրներ լուծելու համար ուսումնասիրում է կենսաբանական համակարգերն ու գործընթացները, կոչվում է **բիոնիկա**:
- II Բիոնիկայի կարգախոսն է՝ «Կենդանի նախատիպը* նոր տեխնիկայի բանալին է»: Կենդանի բնության մասին գոյություն ունեցող գիտելիքները ինժեներական խնդիրներ լուծելու համար օգտագործելու գաղափարը պատկանում է իտալացի նկարիչ **Լեոնարդո դա Վինչիին**, ով փորձում էր թռչունների թռիչքի մեխանիզմի ուսումնասիրության հիման վրա ստեղծել թռչող սարք՝ օրնիթոպտեր:
- III Հայտնի է, որ դելֆինը շատ արագ է լողում և հսկայական ցատկեր է կատարում: Հիդրոդինամիկոսների** հաշվարկներով, դելֆինը չպետք է կարողանա լողալ ժամում 20 կիլոմետրից ավելի արագությամբ: Իսկ իրականում նա այս արագությունը գերազանցում է երկու-երեք անգամ: Ամերիկացի գիտնական Ջեյմս Գրեյը այս երևույթի վրա ուշադրություն է դարձրել դեռևս 1936 թվականին: Նա գրել է. «Դելֆինը կամ ցանկացած կաթնասուն յոթ անգամ ավելի ուժ ունի, ինչը անհնար է, և/կամ նա ինչ-որ աներևակայելի ուժով կարողանում է ջրի դիմադրությունը նվազեցնել»: Այս անբացատրելի երևույթը՝ շարժվել քո կարողություններից ավելի արագ, ստացել է **«Գրեյի պարադոքս»** անվանումը:

* Նախատիպ – ինչ-որ բանի սկզբնական նմուշ, առաջին տեսք:

** Հիդրոդինամիկոս – գիտնական, որն ուսումնասիրում է պինդ մարմինների շարժումը ջրում:

Անցնել հարցերին. [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#)

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#) [27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#)

- IV Հետագա դիտարկումները ցույց տվեցին, որ դելֆինի հիդրոդինամիկ հատկությունները շատ ավելի լիարժեք են, քան սուզանավերի կառուցվածքները: Գիտնականները հետաքրքրվեցին այս փաստով: Նրանք ուսումնասիրեցին դելֆինի հարթ, ամրակուռ մաշկը և, դրա նմանությամբ ստեղծեցին սուզանավի կորպուսի համար «ծածկոց» (պատյան): Ժամում 70 կիլոմետր արագություն զարգացնելիս նման մոդելը ջրում 60 տոկոսով պակաս դիմադրության էր հանդիպում, քան «առանց ծածկոցի» նավերը: Բայց այս մոդելը դելֆինի մաշկի միայն ամենակոպիտ նմանակումն է ներկայացնում:
- V Ներկայումս հաստատված է, որ լողի գործընթացում, մաշկի արտաքին շերտի առանձնահատկություններից բացի, ջրի դիմադրության հաղթահարման գործում մեծ դեր է կատարում դելֆինի գլխուղեղը: Այն նյարդային ազդակների միջոցով կարգավորում է մարմնի այն մասի ենթամաշկային մկանային համակարգի գործունեությունը, որը լողի ժամանակ բխվում է ջրի ամենամեծ դիմադրությանը:

* Նախատիպ – ինչ-որ բանի սկզբնական նմուշ, առաջին տեսք:

** Հիդրոդինամիկոս – գիտնական, որն ուսումնասիրում է պինդ մարմինների շարժումը ջրում:

Անցնել հարցերին. [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#)

10. Ի՞նչ է ուսումնասիրում բիոնիկան:

- ա) Մարդկային ինժեներական գործունեության զարգացման օրինաչափությունը՝ տեխնիկական առաջընթացը արագացնելու նպատակով:
- բ) Կենդանի օրգանիզմների ֆիզիոլոգիական և անատոմիական առանձնահատկությունները՝ այս կամ այն տեխնոլոգիական խնդիր լուծելու նպատակով:
- գ) Որոշ կենդանիների կոմպակտ «սարքերը»՝ արտաքին աշխարհի հետ նրանց փոխազդեցությունը բացատրելու համար:
- դ) Կենդանի օրգանիզմների կենսաբանական համակարգերը՝ դրանց գործունեության ընդհանուր օրինաչափությունները որոշելու համար:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

11. Ի՞նչ գործառույթ ունի **Լեոնարդո դա Վինչիի** դրվագը տեքստում:

- ա) Մեզ ծանոթացնել կենդանի բնության մասին գոյություն ունեցող գիտելիքի կիրառմամբ ինժեներական խնդիր լուծելու առաջին փորձին:
- բ) Հստակեցնել թռչունների թռիչքի մեխանիզմի լիարժեքությունը թռչող սարքի՝ օրնիթոպտերի համեմատությամբ:
- գ) Մեզ ծանոթացնել բիոնիկայի՝ որպես գիտության ժամանակակից մեթոդները և նվաճումները:
- դ) Հստակեցնել իտալացի նկարիչների վաստակը և նրանց գործունեության ոլորտների բազմազանությունը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

12. Տեքստի համաձայն՝ հիդրոդինամիկոսների համար անհասկանալի էր այն, որ՝

- ա) դելֆինի լողի արագությունը գերազանցում է օրնիթոպտերի թռիչքի արագությանը,
- բ) դելֆինը չի կարող լողալ 20-30 կմ/ժ-ից ավելի արագությամբ,
- գ) դելֆինն ունի ջրի դիմադրությունը զգալիորեն նվազեցնելու ունակություն,
- դ) դելֆինը յոթ անգամ ավելի ուժ ունի, քան ցանկացած այլ կաթնասուն:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

13. Ի՞նչ արդյունքներ հետևեցին դելֆինի **մաշկի կառուցվածքի** ուսումնասիրությանը:

ա) Բարելավվեց ժամանակակից թռչող սարքերի կոնստրուկցիան:

բ) Որոշվեց նավի շարժման ընթացքում ջրի դիմադրությունը մեծացնելու մեխանիզմը:

գ) Փորձարկվեցին Լեոնարդո դա Վինչիի կողմից ստեղծված նավի կառուցվածքները:

դ) Բարելավվեցին որոշ տեսակի նավերի հիդրոդինամիկ հատկությունները:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

14. Մաշկի յուրահատուկ հատկություններից բացի, ի՞նչն է օգնում դելֆինին **արագ լողալու** մեջ:

ա) Մաշկի արտաքին շերտը, որը կարգավորում է նյարդային ազդակների գործունեությունը:

բ) Գլխուղեղը, որը նյարդային ազդակների միջոցով վերահսկում է դելֆինի շարժումը ջրի հոսանքին հակառակ:

գ) Գլխուղեղը, որը նյարդային ազդակների միջոցով կարգավորում է ենթամաշկային մկանային համակարգի գործունեությունը:

դ) Նյարդային ազդակները, որոնք ապահովում են գլխուղեղի գործունեությունը լողի գործընթացում:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

15. Ո՞ր նախադասությունն է առավել ճշգրիտ արտահայտում այս տեքստի հիմնական գաղափարը:

ա) Գրեյի պարադոքսը՝ «Շարժվիր քո կարողություններից ավելի արագ»:

բ) Դելֆինի հիդրոդինամիկ հատկությունները նույնպես մշակված են, ինչպես սուզանավի կոնստրուկցիան:

գ) «Կենդանի նախատիպը նոր տեխնիկայի բանալին է»:

դ) Ինժեներական խնդիրները լուծելու համար կենդանի բնությունը դիտարկելու գաղափարը պատկանում է Լեոնարդո դա Վինչիին:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

Համանուններ

Համանունների տեսակի ստորև տրված առաջադրանքներում կիրառված բառերից մի քանիսը հանդիպում են տեքստում (նման դեպքում բառի կողքին նշված է համապատասխան պարբերությունը): Ուշադրությամբ ընթերցե՛ք, ինչ է պահանջվում յուրաքանչյուր առաջադրանքում և դրանից հետո միայն ընտրեք արդարացված պատասխանը: Առաջադրանքը ճիշտ կատարելու գործում կարող է օգնել տեքստը:

16. Ստորև թվարկածներից ո՞ր գույգում է նույնպիսի հարաբերակցություն՝ կապ, ինչպիսին քիոնիկա : կենսաբանական համակարգեր բառագույգում է:

ա) Մաթեմատիկա : Հաշվիչ մեքենաներ

բ) Փիլիսոփայություն : Հիմնական օրինաչափություններ

գ) Աստղագիտություն : Երկնային մարմիններ

դ) Աշխարհագրություն : Մթնոլորտային տեղումներ

ե) Քիմիա : Լաբորատոր հետազոտություններ

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

17. Ստորև թվարկածներից ո՞ր գույգում է նույնպիսի հարաբերակցություն, ինչպիսին նշանաբան : ասուլիք բառագույգում է:

- ա) Զինանշան : Պայմանական նշան
- բ) Վերնագիր : Որոնողական համակարգ
- գ) Լեզենդ : Պատմական դեմք
- դ) Աֆիշ : Թատերական ներկայացում
- ե) Բանաստեղծություն : Քնարական հերոս

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

18. Ստորև թվարկածներից ո՞ր գույգում է նույնպիսի հարաբերակցություն, ինչպիսին հիդրոդինամիկա : ջուր բառագույգում է:

ա) Տիեզերագնացություն : Տիեզերք

բ) Ավիացիա : Տեխնիկա

գ) Օվկիանոսագիտություն : Ստորգետնյա հատակ

դ) Օդանավակայան : Տարածություն

ե) Օդանավ : Երկրագունդ

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

19. Ստորև թվարկածներից ո՞ր գույգում է նույնպիսի հարաբերակցություն, ինչպիսին նմանակում : նմանություն բառագույգում է:

ա) Պատիժ : Տուգանված

բ) Կշտամբանք : Անարժան

գ) Աջակցություն : Հուզված

դ) Բացատրություն : Հասկանալի

ե) Խրատել : Լսող

[Վերադարձ տերստի I էջին](#)

[Վերադարձ տերստի II էջին](#)

20. Տեքստի II պարբերությունը սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Կենդանի նախատիպերը նոր տեխնիկայի բանալին է»: Այստեղ «**բանալի**» բառը օգտագործվում է փոխաբերական իմաստով: Ստորև թվարկածներից ո՞ր իմաստն է համապատասխանում դրան:

ա) Լուծման կանոն

բ) Բարդ խնդիր

գ) Կոդ, որի վերծանումը բարդ է

դ) Տեխնոլոգիական նորույթ

ե) Մղում ինչ-որ բան հայտնաբերելու ճանապարհին

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

Տրամաբանություն

Այս տեսքի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կատարվելիք եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրե՛ք հատկապես հարցին, որն ուղեկցում է յուրաքանչյուր առաջադրանքին, և տրված տարբերակներից ընտրե՛ք համապատասխան պատասխանը:

Որոշ հարցերին պատասխանելը կհեշտացնի տվյալների պատկերումը գծագրի կամ դիագրամի ձևով:

21. Հինգ ընկեր՝ Աննան, Գիոն, Էլենեն, Մական և Դաթոն, մրցում էին վազքի մեջ: Տրված են տեղեկություններ.

- Աննան գերազանցեց բոլոր մյուս աղջիկներին:
- Գիոն բոլոր աղջիկներից հետ մնաց:

Ստորև թվարկածներից ո՞րը չի կարող արտացոլել, թե ով որ տեղը զբաղեցրեց:

	I	II	III	IV	V
ա) Աննա	Էլենեն	Մակա	Գիոն	Դաթոն	
բ) Աննա	Մակա	Էլենեն	Գիոն	Դաթոն	
գ) Դաթոն	Աննա	Մակա	Էլենեն	Գիոն	
դ) Դաթոն	Մակա	Աննա	Էլենեն	Գիոն	
ե) Աննա	Դաթոն	Էլենեն	Մակա	Գիոն	

22. Տրված է երկխոսություն.

Սանդրո. Մարդիկ առավելապես մենեջմենթն են ընտրում՝ որպես մասնագիտություն, քան մյուս մասնագիտությունները, քանի որ մենեջերները ավելի բարձր աշխատավարձ ունեն և նաև ավելի երջանիկ են:

Աննա. Համաձայն չեմ ձեզ հետ, բարձր աշխատավարձ առավելապես ունեն տղամարդ մենեջերները և միաժամանակ մենեջերները ավելի շատ պարտք ունեն, քան այլ մասնագիտությունների մարդիկ:

Թվարկածներից n° ր կարծիքին չեն համաձայնում n° չ Սանդրոն և n° չ Աննան.

ա) Ոչ մի մենեջեր չունի բարձր վարձատրություն:

բ) Մենեջմենտը՝ որպես մասնագիտություն առավելապես ընտրում են բարձր աշխատավարձի պատճառով:

գ) Այլ մասնագիտություն ունեցող մարդիկ ավելի քիչ վարկ ունեն, քան մենեջերները:

դ) Կին մենեջերները ավելի երջանիկ են, քան տղամարդ մենեջերները:

ե) Մենեջերները այլ մասնագիտություն ունեցող անձանց համեմատությամբ հարուստ են:

23. Եվրոպայի մի երկրում միևնույն որակավորման բժիշկները մասնավոր կլինիկաներում միջինը 50%-ով ավելի են վաստակում, քան՝ պետական կլինիկաներում: Չնայած դրան, պետական կլինիկաներում բարձր որակավորում ունեցող մասնագետների պակաս չկա: Դրա հիման վրա փորձագետը ենթադրեց, որ աշխատանքի հիմնական մոտիվը բժիշկների համար ոչ թե ֆինանսական, այլ մասնագիտական զարգացման հետաքրքրությունն է:

Ստորև թվարկածներից ո՞ր իրավիճակն է **առավելապես հաստատում** այս ենթադրությունը:

- ա) Մասնավոր կլինիկաներում բժիշկների հաստիքների համար շատ մեծ մրցակցություն է, քանի որ այս երկրում ընդամենը մի քանի մասնավոր կլինիկա գոյություն ունի:
- բ) Այս երկրի պետական կլինիկաներում բժիշկները ավելի պակաս աշխատանքային ժամանակ ունեն և օգտվում են նաև լրացուցիչ արտոնություններից:
- գ) Երկրի պետական կլինիկաներում հիվանդների թվաքանակը ավելի է, քան՝ մասնավոր կլինիկաների հիվանդների թվաքանակը:
- դ) Երկրի պետական կլինիկաներում որոշ բժիշկների աշխատավարձը ավելի է, քան մասնավոր կլինիկաների ամենաբարձր վարձատրվող բժիշկների աշխատավարձը:
- ե) Հետազոտությունները հաստատեցին, որ բուժման որակը երկրի պետական կլինիկաներում ավելի բարձր է, քան՝ մասնավոր կլինիկաներում:

24. Տրված են դրույթներ.

I. Ոչ մի պատմական ֆիլմ զվարճալի չէ:

II. Միայն գեղարվեստական ֆիլմերն են զվարճալի:

III. Բոլոր պատմական ֆիլմերում կիրառված են փաստեր:

IV. Ոչ մի գեղարվեստական ֆիլմում չեն կիրառված փաստեր:

Ստորև թվարկածներից ո՞րն է ճիշտ նկարագրում այս նախադասությունների միջև առնչությունը:

ա) I բխում է մնացած երեքից,

բ) II բխում է մնացած երեքից,

գ) III բխում է մնացած երեքից,

դ) IV բխում է մնացած երեքից,

ե) դրանցից ոչ մեկը չի բխում մնացած երեքից:

25. Տրված է.

- Որոշ կինոքննադատների դուր չեն գալիս կատակերգական ժանրի ֆիլմերը:
- Բոլոր նրանք, ովքեր չեն հավանում կատակերգական ժանրի ֆիլմեր, հիսուն տարեկանից բարձր են:
- Որոշ մարդիկ, ովքեր չեն հավանում կատակերգական ժանրի ֆիլմեր, թատրոնի երկրպագու են:

Թվարկածներից ո՞րն է անպայման սխալ, եթե տրված դրույթները ճշմարիտ են:

ա) Որոշ կինոքննադատներ թատրոնի երկրպագու են:

բ) Ոմանք չեն հավանում կատակերգական ժանրի ֆիլմեր, և նրանք հիսուն տարեկանից բարձր չեն:

գ) Բոլոր կինոքննադատները, ովքեր չեն հավանում կատակերգական ժանրի ֆիլմեր, հիսուն տարեկանից բարձր են:

դ) Բոլոր կինոքննադատները, ովքեր թատրոնի երկրպագու են, հիսուն տարեկանից բարձր են:

ե) Թատրոնի ոչ մի երկրպագու, ով չի հավանում կատակերգական ժանրի ֆիլմեր, հիսուն տարեկանից ցածր տարիքի չէ:

Նախադասությունների լրացում

Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծիկներով: Մի գծիկը երբեմն մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի բառ է նշանակում:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակ պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից շեղ (/) գծիկներով են սահմանազատված: Ընտրե՛ք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հաջորդաբար տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում, կառուցվի իմաստով արդարացված նախադասություն:

26. Պատմության յուրաքանչյուր կետ խաչմերուկ է: Անցյալը ներկայի հետ կապում է միայն մեկ ճանապարհ, - _____ դեպի ապագա տանող այս ճանապարհը ճյուղավորված է բազմաթիվ կաճաններով: Որոշ կաճաններ ավելի լայն են, ուղիղ և լավ գծանշված, _____, որ մարդկային ցեղը դրան _____ երբեմն պատմությունը կամ ժողովուրդը, որը կերտում է այդ պատմությունը, _____:

ա) ուստի / բայց գոյություն չունի շանս / կհետևի, թեև / երբեք չի շեղվի ճանապարհից

բ) բայց / այդ պատճառով շանսը մեծ է / կհետևի, թեև / հանկարծ կշեղվի այլ տեղ

գ) ուստի / բայց գոյություն չունի շանս / չի հետևի, որովհետև / հանկարծ կշեղվի այլ տեղ

դ) բայց / այդ պատճառով շանսը մեծ է / չի հետևի, որովհետև / երբեք չի շեղվի ճանապարհից

27. Կատակերգությունում դերակատարության համար _____ ծաղրածուի դերն է, _____ նա, ով այդ դերը կատարում է, _____ լինի:

ա) ամենադժվարը / չնայած այն բանին, որ / ինքն էլ սրամիտ պետք է

բ) ամենահեշտը / չնայած այն բանին, որ / ինքը սրամիտ չպետք է

գ) ամենադժվարը / որովհետև / չի կարելի որ ինքն էլ սրամիտ չ

դ) ամենահեշտը / որովհետև / չի կարելի որ ինքը սրամիտ չ

28. Ազատության վիճակը բոլորովին էլ չի հանդիսանում ինքնակամության վիճակ. _____ ազատության վիճակում մարդը _____ տնօրինելու սեփական անձը և միտքը, նա _____, ոչնչացնի սեփական անձը կամ իր տիրապետության տակ գտնվող որևէ արարչագործություն:

ա) քանի որ / ունի լիակատար իրավունք / ունի նաև այն բանի իրավունքը

բ) չնայած նրան, որ / չունի իրավունք / չունի ոչ էլ այն բանի իրավունքը

գ) քանի որ / չունի անսահման ազատություն / ունի նաև լիակատար իրավունք

դ) չնայած նրան, որ / ունի անսահման ազատություն / չունի իրավունք

29. _____ , որ տնտեսության _____ զուգահեռաբար երկրում ցածր եկամուտ ունեցող մարդկանց թվաքանակն էլ _____:

ա) Չարմանալի չէ, / վատացմանը / նվազում է

բ) Տարօրինակ է, բայց փաստ է / աճին / ավելանում է

գ) Տարօրինակ է, բայց փաստ է, / վատացմանը / ավելանում է

դ) Չարմանալի չէ, / աճին / նվազում է

Ընթերցած տեքստի վերախմաստավորում

Ուշադրությամբ ընթերցե՛ք և վերախմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին պատասխանելու համար հնարավոր է անհրաժեշտ լինի տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից անցնել հարցին: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմելով»:

- I Վերջին տարիներին գիտնականները կենդանիների ինտելեկտի վերաբերյալ կարևոր նյութ ձեռք բերեցին: Նոր Կալեդոնյան ագռավները կոտրում են մանր ճյուղերը և դրանց միջոցով ծառի վրա կտցահարում են միջատների բները: Ութսունուկները իրենց որջերի բների մուտքի մոտ քարեր են դարսում՝ իրենց պաշտպանության համար: Ագռավները ոչպիտանի իրերը միացնելով կարող են նաև ստեղծել մեկ ֆունկցիոնալ առարկա: Կենդանաբանական այգու վանդակում փակված գոմեշը փորձում է օգնել գլխիվայր եղած կրիային: Անկասկած, շատ կենդանիներ ունեն տպավորիչ ունակություններ: «Կենդանիների վարքագիծը ինձ մտածել է տալիս այն մասին, որ նրանք ունեն մեր նման հույզեր էմոցիաներ», - գրում է հետազոտող Յուդիթիտ Բհատտաչարջին: Գիտնականներին, ովքեր հետազոտում են կենդանիների հույզերը, մեղադրում են նույնիսկ նրանում, որ իրենց հետազոտության օբյեկտներին անթրոպոմիզացիայի* են ենթարկում, դարձնում են մարդակերպ:
- II Ընդհանուր առմամբ, հույզերը ներքին վիճակ է, որը մեզ մղում է որոշակի գործողություններ ձեռնարկելու: Մենք չենք կարող քաղցը կամ ծարավը հույզ անվանել, բայց կարող ենք նմանեցնել դրանց, քանի որ դա նույնպես ներքին վիճակ է, որը պայմանավորում է արարքները: Դրանք կոչվում են նախնադարյան պարզունակ հույզեր: Անտեսանելի «հրամայականը», վախի նման նախնադարյան հույզ է, որը թելադրում է կենդանում որոշակի արարք: Կարելի է սերն ու վիշտը համարել ավելի խորը, ավելի իմաստավոր հույզեր, բայց էությանը դրանք ոչնչով չեն տարբերվում նախնադարյան հույզերից: Ցանկացած հույզ, անկախ նրանից, թե որքան վեհ և այլաշխարհիկ է, պետք է բխի այս նախնադարյան հույզերից: Եթե այդպես է, ապա կենսաբանական տարբեր տեսակներ լվից մինչև շիմպանզեն, ունեն հույզեր՝ ոմանք պարզունակ, նախնադարյան, իսկ ոմանք՝ զարգացած:
- III Արջագռավների ընտանիքը հայտնի է տպավորիչ մտավոր կարողություններով (գործիքների կիրառում, հիմնախնդիրների լուծում և այլն): Բացի այդ, նրանք նաև ցուցաբերում են այնպիսի վարքագիծ, որը խոսում է նրանց խելացիության այլ շերտի մասին: Այն վերաբերում է կարեկցանքին՝ էմպաթիային: Տարիներ առաջ, ավստրիացի կենսաբան Թոմաս Բուգնիարը, արջագռավներին դիտարկելիս նկատեց, որ երկու թռչունների հակադրմանը ականատես լինելով, երրորդ առանձնյակը, կարծես մխիթարում էր պարտվողին:

*Անթրոպոմորֆիզմ՝ - Մարդակերպություն (հունարեն՝ անթրոպոս նշանակում է մարդ, իսկ մորֆե՝ տեսակ) –մարդկային հատկանիշների տարածում կենդանիների, բույսերի և բնական երևույթների վրա:

Անցնել հարցերին. [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#)

IV Հուզական ինտելեկտի գոյությունը ենթադրում է ուրիշների հուզական վիճակը ընկալելու ունակություն: Հետազոտող Լիեն Պրուփսը նման փորձ անցկացրեց. նա ախոռի առջև ձիերի իրատեսական չափի լուսանկարներ կախեց: Մի լուսանկարում ձիու ականջները ցցված էին՝ խլշած, աչքերը՝ հանգիստ, պատկերված էր գոհունակ ձի: Երկրորդ լուսանկարում ձին վախեցած տեսք ուներ՝ ականջները ետ գցած, ծնոտները սեղմած և քթանցքները լայնացած: Պրուփսի ուսանողը ախոռից դուրս բերեց սպիտակ ձի: Ձին մի քանի րոպե կանգնած էր և նայում էր լուսանկարներին: Ապա նա մոտեցավ երջանիկ դեմքին և քիթը մոտեցրեց լուսանկարին: Այդպիսի փորձ կատարվեց 48 ձիու վրա: Ումանք ընտրություն ունեին ուրախ և չեզոք դեմքի արտահայտության միջև, ումանք՝ չեզոք և զայրացած դեմքի արտահայտության միջև: Ձիերը գրեթե միշտ խուսափում էին զայրացած դեմքից, ինչը հետազոտողներին հիմք տվեց ենթադրելու, որ նրանք կարողանում էին ճանաչել անձանոթ անհատների հույզերը:

V Մեկ այլ հետազոտության մեջ ձիուն ցույց էին տալիս մարդու լուսանկար՝ ժպտացող կամ զայրացած: Լուսանկարը ցույց էին տալիս առավոտյան, իսկ կեսօրին լուսանկարում պատկերված անձը նստում էր ձիու առջև՝ դեմքի չեզոք արտահայտությամբ: Եթե առավոտյան ձիուն ցույց էին տալիս զայրացած մարդու լուսանկար, ապա կեսօրին նույն մարդուն տեսնելիս կենդանին սթրեսի նշաններ էր ցուցաբերում: Եթե ձին տեսել էր երջանիկ մարդու լուսանկար, նա ավելի դրական կամ չեզոք էր արձագանքում: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ձիերը կարող են ունենալ ոչ միայն ձիերի, այլև մարդկանց հուզական վիճակները տարբերակելու և դրանց արձագանքելու ունակություն: Այս վարքագիծը վկայում է բարձր զարգացած հիշողության և ճանաչելու հմտությունների մասին:

*Անթրոպոմորֆիզմ՝ Մարդակերպություն (հունարեն՝ անթրոպոս նշանակում է մարդ, իսկ մորֆե՝ տեսակ) –մարդկային հատկանիշների տարածում կենդանիների, բույսերի և բնական երևույթների վրա:

Անցնել հարցերին. [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#)

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#) [27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#)

30. Տրված է չորս նախադասություն I պարբերությունից .

I. Վերջին տարիներին գիտնականները կենդանիների ինտելեկտի վերաբերյալ կարևոր նյութ ձեռք բերեցին:

II. Անկասկած, շատ կենդանիներ ունեն տպավորիչ ունակություններ:

III. Կենդանիների վարքագիծը ինձ մտածել է տալիս այն մասին, որ նրանք ունեն մեր նման հույզեր:

IV. Գիտնականներին, ովքեր հետազոտում են կենդանիների հույզերը, մեղադրում են նույնիսկ նրանում, որ իրենց հետազոտության օբյեկտներին անթրոպոմիզացիայի են ենթարկում, դարձնում են մարդակերպ:

Հետևյալ պնդումներից ո՞ր նախադասությունը հաստատող «պատկերազարդում» չեն կարող համարվել նույն պարբերությունում բերված ազոավների, ութոտնուկների, գոմեշների և կրիաների օրինակները:

ա) I նախադասության

բ) II նախադասության

գ) III նախադասության

դ) IV նախադասության

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

31. Ստորև թվարկածներից ^որն է **հույզերի վերաբերյալ** արդարացված դատողությունը II պարբերության համաձայն:

- ա) Կենդանիների շատ տեսակներ ունեն տարբեր տիպի հույզեր, որոնք թելադրում են նրան կոնկրետ արարքը:
- բ) Անտեսանելի «հրամայականը», վախի նման նախնադարյան հույզ է, որը կենդանուն մղում է ցանկացած արարքի:
- գ) Նախնադարյան հույզերը պայմանավորում են ցանկացած վեհ կամ այլմոլորակային հույզեր կենդանու մեջ:
- դ) Սովը և ծարավը կարելի է անվանել հույզ, քանի որ երկուսն էլ ներկայացնում են ներքին վիճակներ:

[Վերադարձ տեստի I էջին](#)

[Վերադարձ տեստի II էջին](#)

32. Տեքստում արջագռավների մասին դրվագը մեզ արջագռավների ընտանիքի ներկայացուցիչներին ծանոթացնելու գործառույթ ունի.

ա) մեկ այլ առանձնյակի կարեկցելու հազվագյուտ ունակություն՝ մտավոր ինտելեկտի այս շերտը բնորոշ է շատ տեսակների:

բ) Տպավորիչ մտավոր կարողություններ, որոնք բնորոշ են միայն այս տեսակին:

գ) Առանձնահատուկ ունակություն՝ այլ առանձնյակի «ապրումները» ճանաչելու և որոշակի կարեկցանք արտահայտելու:

դ) Բարձր զարգացած ունակություն՝ տարբերակելու պարտվող և հաղթող առանձնյակներին:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

33. Հուզական ինտելեկտը ենթադրում է ուրիշների հուզական վիճակը ընկալելու ունակություն: Կարո՞ղ ենք, թե՞ ոչ ձիերի կապակցությամբ խոսել հուզական ինտելեկտի մասին: (Պատասխանեք Լիեն Պրուփսի փորձի արդյունքների համաձայն):

- ա) Այո՛, որովհետև ձիերը խրտնում են իրենց անձանոթ անհատի դեմքը տեսնելիս, ինչը վկայում է նրանց մեջ հուզական ինտելեկտի առկայության մասին:
- բ) Այո՛, քանի որ շատ դեպքերում ձիերը կարողացան ճանաչել անձանոթ անհատների հույզերը, ճիշտ այդ ունակությունն է ենթադրում հուզական ինտելեկտը:
- գ) Ո՛չ, քանի որ հուզական ինտելեկտը ենթադրում է նաև սեփական հույզերի կառավարում, ինչը ձիերը չկարողացան անել զայրացած անհատ տեսնելու դեպքում:
- դ) Ո՛չ, քանի որ հուզական ինտելեկտը ենթադրում է ուրիշի հույզերը ընկալելու ունակություն, իսկ ձիերը չէին կարողանում ճանաչել այլ անհատների չեզոք արտահայտությունները:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

34. Ստորև թվարկածներից ո՞րն է մտածել տալիս այն մասին, որ ձիերն ունեն **վարքագծի ճանաչման և հիշողության** բարձր զարգացած ունակություններ:

- ա) Ձիերը կարողացան տարբերակել տարբեր հույզեր ունեցող մարդուն չեզոք դեմքի արտահայտություն ունեցող մարդուց:
- բ) Ձիերը հիմնականում ճանաչում, հիշում և արձագանքում են մյուս ձիերի հույզերին, բայց դժվարանում են տարբերակել մարդկանց հույզերը:
- գ) Ձիերը կարողացան լուսանկարը կապել կոնկրետ անձի հետ, հիշել այդ անձին և նաև նրա կոնկրետ հույզը և համապատասխանաբար արձագանքել նրան:
- դ) Ձիերը արձագանքում են մարդու միայն դեմքի չեզոք արտահայտությանը, նրանք նաև հիշում և սթրեսի նշաններ են ցուցաբերում, երբ տեսնում են անձանոթ մարդու:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

35. Ո՞րն է այս տեքստի հիմնական նպատակը:

- ա) Նախնադարյան և բարձր զարգացած հույզերի փոխկապակցության որոշումը կենդանիների մոտ և ինտելեկտի հետ նրանց կապի ըմբռնումը:
- բ) Հետազոտությունների տեսաբանում, որոնք ուսումնասիրում են կենդանիների ինտելեկտը և մեզ ծանոթացնում են անթրոպոմորֆիզմի՝ մարդակերպության կոնկրետ դեպքերին:
- գ) Կենդանիների մոտ բարձր զարգացած հիշողության թե այն էմոցիաներին ծանոթացում, որոնք նրանց որոշակի վարքագծի են մղում:
- դ) Ժամանակակից հետազոտություններին ծանոթացում, որոնք վերաբերում են կենդանիների մոտ որոշակի տիպի ինտելեկտի, մարդուն նման ունակությունների բացահայտմանը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

Համանուններ

